ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-502-23.04.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝

1) 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաեւ ոչ նյութական վնասը:».

2) 17-րդ հոդվածում լրացնել 4-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 162.1-րդ հոդվածով.

«Հոդված 162.1. Ոչ նյութական վնասի հասկացությունը եւ դրա հատուցումը

1. Սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2. Եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետեւանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում (սույն օրենսգրքի իմաստով՝ կոնվենցիոն իրավունքների խախտում), ապա այդ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում՝ նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

3. Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7

Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

4. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով, իսկ կոնվենցիոն իրավունքների խախտման եւ անարդացացի դատապարտման հետեւանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2-րդ հոդվածով սահմանված կարգին եւ պայմաններին համապատասխան»:

Հոդված 3. Օրենսգրքի 2.1-րդ պարագրաֆի վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «« 2.1. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1087.2-րդ հոդվածով.

«Հոդված 1087.2. Կոնվենցիոն իրավունքների խախտման եւ անարդարացի դատապարտման հետեւանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը եւ պայմանները

1. Կոնվենցիոն իրավունքների խախտման եւ անարդացացի դատապարտման հետեւանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման եղանակը, հիմքը եւ չափը որոշվում է սույն հոդվածին եւ սույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածին համապատասխան:

2. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից:

3. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

4. Ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

5. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) եւ համաչափության սկզբունքներին համապատասխան:

6. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս՝ դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը եւ տեւողությունը, պատճառած վնասի հետեւանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաեւ այլ վերաբերելի հանգամանքներ:

7. Հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ կամ 3?րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 3-րդ մասում նախատեսված դեպքում.

2) նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման պարագայում:

8. Ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսած առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետեւանքներ:

9. Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել սույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ վեցամսյա ժամկետում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի նոյեմբերի 1-ին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ				
հ/հ	**Առաջարկության հեղինակը**	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
	1	2	3	4
1.	ՀՀ Աժ պատգամավոր Արփինե Հովհաննիսյան	1. Առաջարկվել է Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետից հանել «գույքային իրավունքները կամ» բառերը:	Ընդունվել է:	1. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
		2. Առաջարկվել է Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետից հանել «հոգաբարձուն» բառը:	Ընդունվել է:	2. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
		3. Առաջարկվել է Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ կետում ավելացնել «արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ» բառերը:	Չի ընդունվել:	3. Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ կետում նշվում է, որ ոչ նյութական վնասի հատուցման չափը դատարանը որոշում է ողջամտության, արդարացիության և համաչափության սկզբունքներին համապատասխան: Այս սկզբունքների միաժամանակյա կիրառելիության պահանջն ինքնին ենթադրում է հավասար մոտեցում համանման փաստական հանգամանքների նկատմամբ, հետևաբար լրացուցիչ մասնավորեցման անհրաժեշտություն չի առաջանում:

2.	ՀՀ Աժ պատգամավոր Էդմոն Մարուքյան	1. Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դիմումի հիման վրա՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 3-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 29-ի ՍԴՈ-1000 որոշմամբ բացահայտվում է օրենքի հետադարձ ուժի խնդիրը: Մասնավորապես, որոշման 6-րդ կետում նշվում է հետևյալը. «ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը սահմանադրական մակարդակով կարգավորում է ինչպես անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքների, այնպես էլ այլ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը, և, ըստ այդմ՝ այդ դրույթը հասցեագրված է ինչպես օրենսդրին, այնպես էլ այլ իրավաստեղծ մարմիններին: Այդ նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը (հաշվի առնելով նաև Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջները): Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու	Չի ընդունվել:	1. Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելիս ՀՀ սահմանադրական դատարանն այն չի պայմանավորել բացառապես Խաչատրյանի գործով առկա փաստական հանգամանքներով: Սահմանադրական դատարանը քննարկել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորության բացակայությունը դրա սահմանադրականության համատեքստում և ինստիտուցիոնալ առումով է ճանաչել քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում դրա բացակայությունը հակասահմանադրական: Այդ պատճառով, քննարկվող օրենքին հետադարձ ուժ տալը չի ենթադրում դրա կիրառումը հենց Ա.Խաչատրյանի նկատմամբ՝ հատկապես հաշվի առնելով այն, որ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը կորցնելու է իրավական ուժը ոչ թե որոշման կայացման պահից՝ 2013 թվականի նոյեմբերի 5-ից, այլ մեկ տարի հետո:

		ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ»: Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1121 քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշումն ընդունվել է 2013 թվականի նոյեմբերի 05-ին: Այսպիսով, առաջարկվում է այս օրենքին առնվազն մինչև 2013 թվականի նոյեմբերի 05-ը տալ հետադարձ ուժ, քանի որ, ինչպես նշվեց, այդ ժամանակ է կայացվել ՍԴՈ-1121 որոշումը: Այլ կերպ բազմաթիվ գործեր, այդ թվում նաև Արթուր Խաչատրյանի գործը կրկին կուղարկվի ՄԻԵԴ: Եթե առնվազն 1 տարով հետադարձ ուժ հաղորդվի քննարկվող օրենքին, բազմաթիվ գործեր կքննվեն ներպետական դատարաններում, ինչը շահեկան կլինի թե՞ դատական ծախսերի, թե՞ նախադեպային իրավունքը զարգացնելու առումով:		

		2. Առաջարկվում է բարձրացնել փոխ-հատուցման շեմը, կամ ընդհանրապես որևէ սահման չնախատեսել և հնարավորություն տալ, որպեսզի համակարգը զարգացվի նա-խադեպային իրավունքով, քանի որ անհամաչափ փոխհատուցում տրամադրելը ևս հանդիսանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպա-նության մասին եվրոպական կոնվենցիայի խախտում:	Չի ընդունվել:	2. Նախագծի 4-րդ հոդվածի 7-րդ կետում սահմանվել է հատուցման ողջամիտ չափ՝ հաշվի առնելով նախագծի առարկային առնչվող իրավական և ֆինանսական բաղադրիչները: Բացի դրանից, Նախագծի 4-րդ հոդվածի 8-րդ կետը նախատեսում է բացառություն՝ դատարանին հնարավորություն տալով կոնկրետ գործով ցուցաբերել անհատական մոտեցում և բացառիկ դեպքերում սահմանել ոչ նյութական վնասի հատուցման առավելագույն չափը գերազանցող գումար: Հատկանշական է, որ փոխհատուցման սահմաններ ամրագրելը, իսկ առանձին դեպքերում՝ դրանից բացառություններ նախատեսելը Վենետիկի հանձնաժողովի կողմից բացասական գնահատականի չի արժանացել: Ավելին, վերջինս ընդգծել է, որ համապատասխան սահմանների ամրագրումն ապահովում է վնասի հատուցման պահանջ ներկայացնողների՝ օրենքի առջև հավասարությունը և իրավական որոշակիությունը: Միաժամանակ, պետք է նաև նկատի ունենալով, որ Նախագիծը ապրոբացիոն նշանակություն ունի բարոյական վնասի ներդրման համար, և չի բացառվում հետագայում հատուցման շեմի վերանայման հնարավորություն:

		3. Առաջարկվում է Նախագծում ներառել Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու բոլոր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման դեպքերով ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմը:	Չի ընդունվել:	3. Նախագծում ոչ նյութական վնասի հատուցման ներդրումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի միայն 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով, ինչպես նաև Կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով պայմանավորելը մեծապես պայմանավորված է Եվրոպական դատարանի՝ Հայաստանի վերաբերյալ գործերով (Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի) կայացրած վճիռների կատարման գործընթացից բխող անհրաժեշտությամբ: Բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի համակարգված օրենսդրական կանոնակարգումը պահանջում է փուլային լուծումներ, որի համար ՀՀ Սահմանադրական դատարանը վերջնաժամկետ է սահմանել սույն թվականի հոկտեմբերի 1-ը: Այս փուլում թռիչքային լուծումներն արդարացված չեն, իսկ հետագա փուլերում՝ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտն ամբողջական կարգավորելիս, կոնվենցիոն իրավունքների շրջանակի ընդլայնումը կարող է դառնալ քննարկման առարկա: